Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 521-Ա որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՂՐԻԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԵՏ-ԲԱԺՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Մեղրիի մաքսատան արդիականացման և վերակառուցման ծրագրի իրականացման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Խորհրդի նպատակն է համակարգել Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև կնքված վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի շրջանակներում նախատեսված միջոցների օգտագործման ուղղությունները:

3. Խորհուրդը խորհրդակցական մարմին է և իր գործունեությունն իրականացնում է՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով և սույն կարգով:

II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Խորհրդի գործառույթներն են՝

ա) վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքում ծագած միջգերատեսչական և միջպետական խնդիրների կարգավորման նպատակով համակողմանի քննարկումների արդյունքում լուծումների տարբերակների կազմումը՝ համապատասխան հիմնավորումներով,

բ) ծրագրի մոնիթորինգի արդյունքների շուրջ քննարկումների կազմակերպումը,

գ) ներգրավված միջազգային կազմակերպությունների հետ խորհրդի գործառույթներից բխող աշխատանքների իրականացումը:

III. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Խորհրդի նախագահը և անդամները խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

6. Խորհրդի աշխատանքներն իրականացվում են նիստերի միջոցով՝ խորհրդի նախագահի կամ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) առաջարկությամբ՝ ըստ անհրաժեշտության:

7. Խորհուրդն իրավասու է քննարկել և առաջարկություններ ներկայացնել ծրագրի իրականացման ընթացքում առաջացած միջպետական և միջգերատեսչական հարցերի վերաբերյալ:

8. Ծրագրի իրականացման հետ կապված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ անհրաժեշտության, խորհրդին ներկայացնում է կոմիտեն:

9. Խորհրդի յուրաքանչյուր նիստի ավարտից հետո կազմվում է արձանագրություն՝ կատարված աշխատանքների և քննարկված հարցերի վերաբերյալ:

10. Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին երկու անգամ:

11. Խորհրդի նախագահը՝

ա) համակարգում է խորհրդի աշխատանքը,

բ) վարում է խորհրդի նիստերը կամ իր բացակայության դեպքում նիստերի վարումը հանձնարարում է խորհրդի անդամներից որևէ մեկին:

12. Խորհրդի անդամը՝

ա) մասնակցում է խորհրդի նիստերին,

բ) ներկայացնում է առաջարկություններ խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

13. Խորհրդի նիստին մասնակցելու անհնարինության դեպքում խորհրդի անդամը նախօրոք տեղեկացնում է խորհրդի նախագահին:

14. Խորհրդի գործունեությունը հրապարակային է, բացառությամբ խորհրդի նախագահի բանավոր հիմնավորմամբ՝ նիստը կամ դրա մի մասը փակ ընթացակարգերով անցկացնելու դեպքերի: Խորհուրդն ապահովում է իր աշխատանքների լուսաբանումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

14.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ